ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից 2017 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը 2017 թվականի ընթացքում աշխատանքներ է իրականացրել բաժնի կանոնադրության պահանջներից բխող և ՀՀ կառավարության որոշումների հիման վրա մշակված երեխայի իրավունքների պաշտպանության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության, սեռի հատկանիշով բռնության կանխարգելման, հաշմանդամների սոցիալական պաշտպանության, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրներով զբաղվող մարզային միջգերատեսչական աշխատանքային խմբի տարեկան աշխատանքային ծրագրերով:

Մարզում երեխաների թիվը 35761 է, որը կազմում է բնակչության 27.5 տոկոսը: Կյանքի դժվարին իրավիճակում է հայտնված 5000 երեխա: Նրանցից 4-ը առանց ծնողական խնամքի մնացած երեխա է, 18-ը՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձ, 672-ը՝ միակողմանի ծնողազուրկ, 382-ը՝ հաշմանդամություն ունեցող, 167-ը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցում սովորում է 53 երեխա: Ընտանեկան նպաստ ստացող 5740 ընտանիքներում կա 12284 երեխա, բազմազավակ ընտանիքներում՝ 2386, ժամանակավոր կացարաններում ապրողների ընտանիքներում՝ 1117, ամուսնալուծված ընտանիքներում՝ 248: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 6 անձ՝ մարզի 5 համայնքներից, հաշվառված է որպես բնակարանի կարիք ունեցող:

2017թ. ընթացքում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվել է 8 քաղաքացի, որից 3-ը ամուսնական զույգ են՝ Արագած և Աշտարակ համայնքներից, միանձնյա որդեգրողների թեկնածուներ են 2-ը՝ Թալին և Աշտարակ քաղաքներից: Երկու որդեգրում է իրականացվել դատարանի վճռով: Խնամակալության և հոգաբարձության է հանձնվել 17 երեխա՝ 8 համայնքներում: Այդ նպատակով կատարվել են տունայցեր, իրականացվել են կենսապայմանների ուսումնասիրություններ:

Բաժնի կողմից տրվել են եզրակացություններ 4 երեխայի մանկատուն ուղեգրելու համար, որից մեկը՝ մասնագիտացված: Բնակչության սոցիալական պաշտպանության ժամանակավոր խնամքի գիշերօթիկ հաստատություններում տեղավորվել է 8 երեխա /Աշտարակ և Օշական համայնքներից/: Նրանցից երեքը գտնվում են Երևանի <<Զատիկ>>, իսկ հինգը՝ ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոններում:

Տարվա ընթացքում գնահատվել են ԿԴԻՀ 135 երեխայի սոցիալ-հոգեբանական կարիքները: Նրանցից 116-ի տվյալները մուտքագրվել են ՀՀ ԱՍՀՆ-ն ԿԴԻՀ երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ: Նրանց աջակցելու նպատակով մշակվել են անհատական վերականգնողական ծրագրեր: Նախկինում մուտքագրվածների հետ միասին ունենք 636 երեխայի վերաբերյալ բաց գործ:Հաշվառված երեխաների և նրանց ընտանիքների հետ շարունակական աշխատանքներ են իրականացվում: Երեխայի կարիքի

գնահատման փուլում հաշվի են առնվում նրա զարգացման առանձնահատկությունները, ընտանեկան պայմանները և ծնողների ծնողավարման ունակությունները: ԸԿԵԻՊ բաժնի մասնագետները տրամադրում են խորհրդատվություն քաղաքացիների ծնողավարման հմտությունները զարգացնելու նպատակով:

Ներառական կրթությունը մարզում արմատավորելու ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում նախկինում ունեցած 2 դպրոցին 2017-18 ուսումնական տարում ավելացել է ևս 4 հանրակրթական դպրոց: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք է գնահատվել մարզի ևս 3 դպրոցներում՝ Ոսկեվազ, Շամիրամ, Արուճ /թվով՝ 35 սովորող/: Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է, որն էլ ապահովում է յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների գնահատումը և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության ապահովումը:

Բացահայտվել է կրթությունից դուրս մնացած 6 երեխա: Նրանք հանրապետության տարբեր համայնքներից մեր մարզի Արագածոտն, Նոր Ամանոս, Օշական, Կոշ համայնքներում ժամանակավոր բնակություն հաստատած ընտանիքներում են ապրում: Երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու համար կապ է պահպանվել համապատասխան մարզերի պատասխանատու աշխատողների, ՀՀ ոստիկանության անչափահասների հարցերով ստորաբաժանումների, ԽՀ մարմինների, կրթական հաստատությունների հետ: Համագործակցության արդյունքում հաջողվել է նրանց ներգրավել կրթության մեջ:

Առողջական ծանր խնդիրների պատճառով 12 երեխա չի կարող հաճախել դպրոց: Աշխատանքներ են տարվում նրանց առողջական, սոցիալական և կրթական խնդիրների բարելավման ուղղությամբ:

Հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների հետ պարբերաբար քննարկվում են նրանց հիմնախնդիրները, տրամադրվում անհրաժեշտ խորհրդատվություն:Հաշմանդամություն ունեցող 3 երեխայի համար ՀՀ ԱՍՀ նախարարության միջոցով համապատասխան սայլակներ են ձեռք բերվել, ընտանիքներից շուրջ 260-ը դրամական աջակցություն է ստացել մարզպետի կողմից, բարեգործական նվերներ՝ հասարակական կազմակերպությունների միջոցով: Նրանց ընտանիքների հետ սոցիալական, կրթական աշխատանքներ են տանում նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների <<Արայի>>, <<Ծիծեռնակ>>, <<Թալին հույս>>, <<Վորլդ Վիժն Հայաստան>> ՄԲԿ Արագածոտնի մարզի Թալինի և Ապարանի գրասենյակների, <<Ձանգակատուն>>, <<Թալինի կանանց ռեսուրս կենտրոն>> ՀԿ-ի կողմից:

Հաշմանդամ երեխաների հետ աշխատանքի փուլում կարևորվել է, որ նրանց համար մատչելի լինեն այն բոլոր ծառայությունները, որոնք օրենսդրությունը նախատեսում է երեխաների համար: Հաշմանդամների սոցիալական ներառման գործում կարևոր ուշադրության կենտրոնում է եղել ներառական կրթության կազմակերպումը, որն այս ընթացքում բավականին բարելավվել է: Արդյունավետ է հաշմանդամ երեխաների հետ բազմամասնագիտական թիմային աշխատանքը:

Տարվա ընթացքում հրավիրվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի 4 նիստ:

Ոստիկանությունում քարտային հաշվառման մեջ են գտնվում 15 անչափահասներ, որոնց նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից նշանակվել են հասարակական դաստիարակներ: Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերման, նրանց հետ կապված խնդիրների լուծման, աշխատանքների միասնական կազմակերպման նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի թիվ 303-Ն որոշման համաձայն մարզային ոստիկանության հետ համատեղ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, անցկացվել է

երկու նիստ, մշակվել է երեխաների կողմից մուրացկանության և թափառաշրջիկության կանխարգելման նպատակով միջոցառումների ծրագիր: Անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման նպատակով համագործակցված աշխատանքներ են տարվել մարզային ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումների, պրոբացիայի պետական ծառայության Արագածոտնի մարզային բաժնի հետ:

Համագործակցել ենք ՀՀ հատուկ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային վարչության հետ: Անչափահասների հարցաքննությանը ներկա են գտնվել բաժնի մանկավարժը /8 դեպք/ և հոգեբանը/1 դեպք/:

Նախորդ տարվա համեմատությամբ աճել է մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնակցությունը երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ հարցեր քննարկող դատական և խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովների նիստերին: Բաժնի մասնագետները մասնակցել են ԽՀՀ-ի 17 նիստերի և նրանց տրամադրել դեպքի ուսումնասիրության վերաբերյալ մասնագիտական կարծիք: Բաժնի համապատասխան մասնագետները մասնակցել են 12 դատական նիստի: 2017թ.աճել են ամուսնալուծության դեպքերը: Ամուսնալուծվող ընտանիքների երեխաների ծնողներից մեկի խնամքին երեխային հանձնելու համար ԸԿԵԻՊ բաժնի իրավաբանի և հոգեբանի կողմից կատարվել են տունայցեր: Ծնողների նկատմամբ երեխայի հուզական կապի մասին հոգեբանի կողմից տրամադրվել է իրավիճակի նկարագրություն՝ 6 դեպքի վերաբերյալ: Աշխատանքներ են տարվել ամուսնալուծված 7 ընտանիքներում երեխաների շահերի պաշտպանության ուղղությամբ:

2017թ ընթացքում ապահովել ենք աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին՝ համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների բացահայտման, այդ ընտանիքներում ապրող երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած, կրթությունից դուրս մնացած, ընտանեկան կոնֆլիկտային իրավիճակում հայտնված անձանց խնդիրները:Բազմամասնագիտական խմբի ներառման միջոցով տվել են հնարավորինս դրական լուծումներ: Մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմիններին պարբերաբար տրամադրվում են խորհրդատվություն և մեթոդական նյութեր՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության բարելավման նպատակով: ԽՀՀ հանձնաժողովների ձևավորման փոփոխման հետ կապված իրավական ակտեր կազմելու ուղղությամբ մասնագիտական աջակցություն է տրվել համայնքների ԽՀՀ նախագահներին և քարտուղարներին: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակային վերլուծություն կատարելու համար համայնքի ղեկավարներին շրջաբերականներ են ուղարկվել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից համապատասխան որոշումների կայացման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ծննդյան վկայական չունեցող 2 երեխա ստացել է ծննդյան վկայական՝ ժամկետի բացթողումով:

Ընտանիքի միջազգային օրվա առթիվ ԸԿԵԻՊ բաժնի կողմից մարզպետարանում կազմակերպվել է միջոցառում, որին մասնակցել են մարզի հանրակրթական, երաժշտական և գեղարվեստի դպրոցների աշակերտներ: Մասնակից 300 երեխաները ստացել են նվերներ, իսկ ''Իմ ընտանիքի պատմությունը''լավագույն շարադրության հեղինակն արժանացել է նաև դրամական պարգևի՝ մարզպետի կողմից: Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ մարզի համայնքներում կազմակերպվել են միջոցառումներ, որոնց մասնակցել են շուրջ 3200 երեխաներ, ստացել նվերներ:

Տարվա ընթացքում հրավիրվել է գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2 նիստ: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և հավասար հնարավորությունների, ընտանեկան բռնության կանխարգելման թեմաներով կազմակերպվել են 18 հանդիպումներ, կլոր-սեղաններ, դպրոցներում բաց դասեր, կանանց իրավունքների վերաբերյալ իրավական ակտերի ներկայացում, նախագծերի քննարկումներ, բժշկական կենտրոններում ստեղծված մայրության դպրոցների գործունեության ուսումնասիրություն և քննարկում:

Երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով բաժնի աշխատակիցները մասնակցել են կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների դեպքերի քննարկումների: Այդ հարցերում համագործակցություն է ապահովվել մարզի ԽՀ մարմինների, <<Վորդ Վիժն>> ՄԲԿ-ն Թալինի և Ապարանի գրասենյակների, ՍԱՏԳ-ների, <<Զանգակատուն>> հասարակական կազմակերպության, դպրոցների տնօրենների, ոստիկանության անչափահասների հարցերով զբաղվող ստորաբաժանումների հետ: Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ մարզի Թալինում և Ապարանում կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում 9 դեպքի վերաբերյալ:

Մարզի տարածքում գործող 12 դպրոցներում ոստիկանության հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել են <<Վնասակար երևույթներ>>, <<Թրաֆիքինգ>> <<Համակարգչային անվտանգություն>> թեմաներով զրույցներ և քննարկումներ:

Մասնագիտական խորհրդատվություն է ցուցաբերվել 489 քաղաքացու: Բաժնի մասնագետները մասնակցել են երեխաների, կանանց իրավունքների պաշտպանության, թրաֆիկինգի վերաբերյալ 7 դասընթացների:

Ընտանիքի, կանանց և երեխաների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Դանիելյան